GHAZARYAN HOVHANNES 1404750070
Digitally signed by GHAZARYAN HOVHANNES 1404750070

ՔԱՂՎԱԾՔ

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/0306/02/23

Վ Ճ Ի Ռ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

27 փետրվարի 2023 թվական քաղաք Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

նախագահությամբ՝ դատավոր Հովհաննես Ղազարյանի

հատուկ հայցային վարույթի կարգով, գրավոր ընթացակարգով, առանց դատական նիստ հրավիրելու քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Արգավանդ Կահույք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության *(ՀՎՀՀ՝ 01261634, պետական գրանցման համարը՝ 290.110.809824)* ընդդեմ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության (*ՀՎՀՀ՝ 00153247, պետական գրանցման համարը՝ 271.184.1027583)*՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության գլխավոր քարտուղարի 2022 թվականի դեկտեմբերի 01-ի թիվ 1488-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Վ Ճ Ռ Ե Ց

1/. «Արգավանդ Կահույք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, բավարարել.

««Արգավանդ Կահույք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին»՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության գլխավոր քարտուղարի 2022 թվականի դեկտեմբերի 01-ի թիվ 1488-Ա հրամանը ճանաչել անվավեր:

2/. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունից հօգուտ «Արգավանդ Կահույք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես Հայցվորի կողմից կատարված դատական ծախսի փոխհատուցում:

3/. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4/. Դատարանի 18.01.2023թ.-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը՝ «Արգավանդ Կահույք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակից հանելուն պարտավորեցնելու վերաբերյալ, պահպանել մինչև թիվ ԵԴ/0306/02/23 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, այնուհետև՝ վերացնել:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Կամովին չկատարվելու դեպքում, կատարում ենթադրող մասով վճիռը կարող է կատարվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ Հովհաննես Ղազարյան